ՍԱՂՄՈՍ 64

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ծածուկ թշնամի-ներից ազատվելու աղոթք <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշ-տին, Դավթի սաղմոսը	Հարստահարված ամբարշտի կողմից, սակայն Տիրոջով ուրախ	Պաշտպանության աղոթք անձնական թշնամիներից	Պաշտպանության աղոթք	Չարախոսների պատիժը
64:1-6	64:1-4	64:1-6	64:1-6	64:1-2
				64:3-4
	64:5-6			64:5-6
64:7-10	64:7-9	64:7-9	64:7-10	64:7-8
				64:9
	64:10	64:10		64:10

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոսերգուին անհանգստացնում է ծածուկ հակառակությունները: Սա վերաբերում է իսրայելացի իր ծանոթներին: Նրանք կոչվում են՝
   1. թշնամի, Սաղմ. 64:1 (BDB 33, KB 38, *Qal* ԴԵՐԲԱՑ)
   2. չարագործներ, Սաղմ. 64:2 (BDB 949, KB 1269, *Hiphil* ԴԵՐԲԱՑ)
   3. անօրենություն գործողներ, Սաղմ. 64:2 (BDB 821, KB 950, *Qal* ԴԵՐԲԱՑ)
   Հակառակորդների անունների վերաբերյալ գրառման համար տես՝ Սաղմ. 1:5, 5:10:

Բ. Նրանց գործողությունները (Սաղմ. 64:2-6) թվարկվում են՝

1. սարսափեցնում են (BDB 808), տես՝ Սաղմ. 91:5
2. ծածուկ խորհուրդներ են վարում
3. անօրենություն են գործում
4. թրի պես սուր լեզուներ ունեն
5. նրանց խոսքերը նետերի պես են արձակում
6. դարանակալած տեղերից են հարձակվում
7. նրանք չեն վախենում (այսինքն՝ Աստծուց)
8. նրանք հաստատ են իրենց չար ծրագրերում
9. նրանք ծրագրում են ծածուկ որոգայթներ լարել
10. նրանք կարծում են իրենց ոչ ոք չի տեսնում (այսինքն՝ Աստված)
11. նրանք անարդարություն են ծրագրում
12. նրանք ջանասիրաբար աղետ են որոնում
13. նրանք չար են իրենց խորհուրդներում և սրտում

Գ. Նրանց դեմ նախատեսված Աստծո քայլերը (Սաղմ. 64:7-10)

1. Նա նրանց նետով վիրավորելու է
2. Նա նրանց սայթաքել է տալու
3. Նա օգտագործելու է հենց նրանց խոսքերը դատաստանի ժամանակ իրենց դեմ
4. Նա նրանք ամոթահար է անելու
5. Նրա գործողությունները նրանց հանդեպ բոլոր մարդկանց ստիպելու է՝
   ա. վախենալ/ակնածել
   բ. Նրա գործը հռչակել
   գ. Նրա գործերի մասին խորհել
6. Նրա գործողությունները պատճառ են լինելու, որ արդարը՝
   ա. ուրախանա Նրա քայլերով
   բ. ապաստան գտնի (այսինքն՝ վստահի) Նրա մեջ
   գ. փառաբանի իր սրտում

Դ. Մարդկային խոսքը կարող է լինել օրհնություն կամ անեծք (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍՔ</u>):

Ե. Չնայած որ անհնար է հաստատել պատմական միջավայրը կամ սաղմոսերգուի ինքնությունը, հետաքրքիր է, թե որքան ռազմական պատկերներ են կիրառվում՝

1. սուր
2. նետեր
3. դարան

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 64:1-6

[1]Ո՛վ Աստված, իմ աղերսանքի ձայնը լսի՛ր.
Պահպանի՛ր կյանքս թշնամու ահից:
[2]Թաքցրո՛ւ ինձ չարերի գաղտնի դավադրություններից,
Անօրենություն գործողների խռովարարությունից,
[3]Որոնք իրենց լեզուները սրի պես սրել են,
Լարել են իրենց նետերը՝ դառը խոսքերը՝
[4]Անմեղին գաղտագողի նետահարելու համար.
Հանկարծակի խոցում են նրան ու չեն վախենում:
[5]Չարախոսությամբ քաջալերում են միմյանց,
Գաղտնի որոգայթները լարելու մասին են խորհրդակցում

Եվ ասում են. «Ո՞վ է տեսնելու»:
[6]Անօրենություններ են որոնում. Ջանասիրաբար որոնեցին.
Նրանցից յուրաքանչյուրի և՛ ներքին խոհերը, և՛ սիրտը խորունկ են:

64:1 «լսի՛ր» Շատ պարբերությունները Սաղմոսներում սկսվում են ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ (տես՝ Սաղմ. 17:1, 27:7, 28:2, 30:10, 39:12, 54:2, 61:1, 64:1, 84:8, 102:1, 119:149, 130:2, 143:1): Սաղմոսները հաճախ աղոթքներ են Աստծուն՝ աղերս, որ գործի Իր ժողովրդի կամ արդար հետևորդի համար:

Աղոթքը հրաշալի արտոնություն է տրված Աստծո ժողովրդին: Այն արձակում է աշխարհի մեջ մի այնպիսի զորություն, որը նախկինում չկար: Տե՛ս ստորև տրված երեք Հատուկ Թեմաները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՂՈԹՔ
SPECIAL TOPIC: EFFECTIVE PRAYER

Ա. Կապված Եռամեկ Աստծո հետ մարդու անձնական փոխհարաբերության հետ՝
1. Կապված Հոր կամքի հետ՝
   ա. Մատթ. 6:10
   բ. 1 Հովհ. 3:22
   գ. 1 Հովհ. 5:14-15
2. Հիսուսի մեջ բնակվելու համար՝
   Հովհ. 15:7
3. Հիսուսի անունով աղոթելը՝
   ա. Հովհ. 14:13,14
   բ. Հովհ. 15:16
   գ. Հովհ. 16:23-24
4. Հոգով աղոթելը՝
   ա. Եփես. 6:18
   բ. Հուդա 1:20

Բ. Կապված մարդու անձնական շարժառիթների հետ՝
1. Չտարակուսելը՝
   ա. Մատթ. 21:22
   բ. Հակ. 1:6-7
2. սխալ խնդրելը՝
   Հակոբոս 4:3
3. Եսասիրաբար խնդրելը՝
   Հակոբոս 4:2-3

Գ. Կապված մարդու անձնական որոշումների հետ՝
1. Համբերություն՝
   ա. Ղուկ. 18:1-8
   բ. Կողոսացիների 4:2
   գ. Հակոբոս 5:16
2. Ընտանիքում տարաձայնություններ՝
   1 Պետրոս 3:7
3. Մեղք
   ա. Սաղմ. 66:18
   բ. Եսայի 59:1-2
   գ. Եսայի 64:7

Բոլոր աղոթքներն էլ պատասխանվում են, սակայն ո՛չ բոլոր աղոթքներն են արդյունավետ: Աղոթքը երկկողմանի փոխհարաբերություն է: Վատագույն բանը, որ Աստված կարող էր անել՝ շնորհել հավատացյալներին իրենց անպատշաճ՝ անտեղի խնդրանքները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ
SPECIAL TOPIC: INTERCESSORY PRAYER

I. Ներածություն
   Ա. Աղոթքը կարևոր է համաձայն Հիսուսի թողած օրինակի.
      1. Անձնական աղոթք - Մարկ.1:35, Ղուկ.3:21, 6:12, 9:29, 22:31-46
      2. Տաճարի մաքրում - Մատթ.21:13, Մարկ.11:17, Ղուկ.19:46
      3. Աղոթքի նմուշ՝ օրինակ - Մատթ.6:5-13, Ղուկ.11:2-4
   Բ. Աղոթքը, հոգատար Աստծո հանդեպ, որը ներկա է, կամենում է և կարող է մեր աղոթքների շնորհիվ մեր և ուրիշների օգտին գործել, մեր հավատքը շոշափելի գործողության մեջ դնելն է:
   Գ. Աստված Ինքն Իրեն սահմանափակել է շատ ոլորտներում Իր զավակների աղոթքների հիման վրա գործելիս (տես՝ Հակ.4:2):
   Դ. Աղոթքի գլխավոր նպատակը Երրորդության Աստծո հետ մեր փոխհարաբերությունն ու անցկացրած ժամանակն է:
   Ե. Աղոթքի շրջանակը կարող է իր մեջ ներգրավվել հավատացյալների հետ առնչվող, անհանգստացնող ամեն ինչ և ամեն ոք: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ նորից ու նորից, եթե այդ միտքը կամ անհանգստությունը վերադառնում է:
   Զ. Աղոթքը կարող է բովանդակել մի քանի տարր.
      1. Փառաբանություն և երկրպագություն Երրորդության Աստծուն
      2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և հոգածության համար
      3. Մեր մեղքերի խոստովանությունը՝ թե՛ անցյալի և թե՛ ներկայի
      4. Մեր կարիքների կամ փափագների համար խնդրվածք
      5. Բարեխոսություն, որի ժամանակ Հոր առջև ենք բարձրացնում ուրիշների կարիքները
   Է. Բարեխոսական աղոթքը մի առեղծված է: Այն մարդկանց, ում համար մենք աղոթում ենք, Աստված մեզնից ավելի շատ է սիրում, մինչդեռ մեր աղոթքները հաճախ ազդում են ինչ-որ փոփոխության, պատասխանի կամ կարիքի վրա ոչ միայն մեր ներսում, այլ նաև նրանց:
II. Աստվածաշնչյան աղբյուրը
   Ա. Հին Կտակարան
      1. Բարեխոսական աղոթքի մի քանի օրինակներ՝
         ա. Աբրահամը աղերսում է Սոդոմի համար. Ծննդ.18:22բ
         բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար.
            (1) Ելից 5:22-23
            (2) Ելից 32:31բ
            (3) 2 Օրինաց 5:5
            (4) 2 Օրինաց 9:18,25բ
            (5) 2 Օրինաց 9:18,25-29
         գ. Սամվելը աղոթում է Իսրայելի համար.
            (1) 1 Թագավորաց 7:5-6,8-9
            (2) 1 Թագավորաց 12:16-23
            (3) 1 Թագավորաց 15:11
         դ. Դավիթը աղոթում է իր երեխայի համար, 2 Թագավորաց 12:16-18
      2. Աստված փնտրում է բարեխոսների, Եսայի 59:16
      3. Գիտակցված, չխոստովանված մեղքը, անզղջում վերաբերմունքը ազդում է մեր աղոթքների վրա՝
         ա. Սաղմոսներ 66:18

բ. Առակաց 28:9
գ. Եսայի 59:1-2, 64:7

Բ. Նոր Կտակարան

1. Որդու և Հոգու բարեխոսական ծառայությունը
   ա. Հիսուսը
      (1) Հռոմեացիս 8:34
      (2) Եբրայեցիս 7:25
      (3) 1 Հովհաննես 2:1
   բ. Սուրբ Հոգին՝ Հռոմեացիս 8:26-27
2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
   ա. Աղոթում է հրեաների համար՝
      (1) Հռոմեացիս 9:1բ
      (2) Հռոմեացիս 10:1
   բ. Աղոթում է եկեղեցիների համար՝
      (1) Հռոմեացիս 1:9
      (2) Եփեսացիս 1:16
      (3) Փիլիպեցիս 1:3-4,9
      (4) Կողոսացիս 1:3,9
      (5) 1 Թեսաղոնիկեցիս 1:2-3
      (6) 2 Թեսաղոնիկեցիս 1:11
      (7) 2 Տիմոթեոս 1:3
      (8) Փիլիմոն հ. 4
   գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին, որ աղոթեն իր համար՝
      (1) Հռոմեացիս 15:30
      (2) 2 Կորնթացիս 1:11
      (3) Եփեսացիս 6:19
      (4) Կողոսացիս 4:3
      (5) 1 Թեսաղոնիկեցիս 5:25
      (6) 2 Թեսաղոնիկեցիս 3:1
3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
   ա. Աղոթել միմյանց համար՝
      (1) Եփեսացիների 6:18
      (2) 1 Տիմոթեոս 2:1
      (3) Հակոբոս 5:16
   բ. Աղոթք հատուկ խմբերի համար՝
      (1) մեր թշնամիների՝ Մատթ.5:44
      (2) Քրիստոնյա մշակների՝ Եբր.13:18
      (3) իշխանների՝ 1 Տիմ.2:2
      (4) հիվանդների՝ Հակ.5:13-16
      (5) ետ նահանջածների՝ 1 Հովհ.5:16

III. Պատասխանված աղոթքների համար պայմանները՝

Ա. Մեր փոխհարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ՝

1. Նրա մեջ բնակվելը՝ Հովհ.15:7
2. Նրա անունով՝ Հովհ.14:13,14, 15:16, 16:23-24
3. Հոգով՝ Եփես.6:18, Հուդա 20
4. Աստծո կամքի համաձայն՝ Մատթ.6:10, 1 Հովհ. 3:22, 5:14-15

Բ. Շարժառիթները՝

1. Առանց վարանելու՝ Մատթ.21:22, Հակ.1:6-7
2. Խոնարհությամբ և ապաշխարությամբ՝ Ղուկ.18:9-14
3. Վատ նպատակով խնդրանք՝ Հակ.4:3
4. Եսասիրությամբ՝ Հակ.4:2-3

Գ. Այլ առանձնահատկություններ՝
1. Հարատևություն՝
   ա. Ղուկաս 18:1-8
   բ. Կողոսացիս 4:2
2. Շարունակ խնդրել՝
   ա. Մատթեոս 7:7-8
   բ. Ղուկաս 11:5-13
   գ. Հակոբոս 1:5
3. Տան մեջ անհամաձայնությունը՝ 1 Պետրոս 3:7
4. Գիտակից՝ հայտնի մեղքերից զերծ՝
   ա. Սաղմոս 66:18
   բ. Առակաց 28:9
   գ. Եսայի 59:1-2
   դ. Եսայի 64:7

IV. Աստվածաբանական եզրակացություն՝

Ա. Ինչպիսի՛ արտոնություն: Ինչպիսի՛ հնարավորություն: Ինչպիսի՛ պատասխանատվություն և պարտավորություն:

Բ. Հիսուսն է մեր օրինակը. Հոգին մեր առաջնորդն է, իսկ Հայրը՝ անհամբեր սպասում է:

Գ. Այն կարող է փոխել ձեզ, ձեր ընտանիքը, ձեր ընկերներին և աշխարհը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՂՈԹՔ, ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ, ՄԻՆՉԴԵՌ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
SPECIAL TOPIC: PRAYER, UNLIMITED YET LIMITED

Ա. Համադասական /Սինոպտիկ/ Ավետարանները՝
1. հավատացյալներին քաջալերվում է աղոթքի մեջ հարատևել և Աստված կապահովի «բարիքներով» (Մատթևոս, Մատթ. 7:7-11) կամ «Իր Հոգով» (Ղուկաս, Ղուկ. 11:5-13)
2. եկեղեցու կարգուկանոնի համատեքստում հավատացյալները (երկու) հորդորվում են միաբանվել աղոթքի մեջ (Մատթ. 18:19):
3. համաձայն Հուդայականության դատաստանի համատեքստի հավատացյալները պետք է հավատքով խնդրեն՝ առանց կասկածելու (Մատթ. 21:22, Մարկ. 11:23-24)
4. երկու առակների (Ղուկաս 18:1-8, անիրավ դատավորի առակը և Ղուկաս 18:9-14՝ Փարիսեցու և մեղավորի առակը) համատեքստում, հավատացյալներին քաջալերվում է անաստված դատավորի և ինքն իրենաարդարացնող Փարիսեցու պես չգործել: Աստված լսում է խոնարհին և զղջացողին (Ղուկաս 18:1-14):

Բ. Հովհաննեսի գրերը՝
1. ի ծնե կույր մարդու համատեքստում, ում Հիսուսը բժշկեց, Փարիսեցիների իրական կուրությունն է հայտնվում: Հիսուսի աղոթքները (ինչպես ցանկացածի) պատասխանվում էին, քանի որ Նա ճանաչում էր Աստծուն և ապրում էր ըստ Իր ճանաչողության (Հովհաննես 9:31):
2. Հովհաննեսի Վերնատան դիսկուրսը (Հովհաննես 13-17)՝
   ա. Հովհաննես 14:12-14 – հավատքով աղոթքը նկարագրվում է հետևյալ կերպ՝
      1) հավատացյալների կողմից է
      2) խնդրանքը Հիսուսի անունով է
      3) Հորը փառավորելու փափագով
      4) պատվիրանները պահելով (հ. 15)
   բ. Հովհաննես 15:7-10- հավատացյալների աղոթքները բնութագրված՝
      1) Հիսուսի մեջ մնալով
      2) Նրա խոսքը նրանց մեջ մնալով
      3) ցանկանալով, որ Հայրը փառավորվի

4) շատ պտուղ բերելով
5) պատվիրանները պահելով (հ. 10)

գ. Հովհաննես 15:15-17 – հավատացյալների աղոթքները բնութագրված՝
1) իրենց ընտրությամբ
2) իրենց պտղաբերությամբ
3) Հիսուսի անունով խնդրելով
4) միմյանց սիրելու պատվիրանը պահելով

դ. Հովհաննես 16:23-24 – հավատացյալների աղոթքները բնութագրված՝
1) Հիսուսի անունով խնդրելով
2) ցանկանալով, որ ուրախությունը լիակատար լինի

3. Հովհաննեսի առաջին թուղթը՝

ա. 1 Հովհաննես 3:22-24 – հավատացյալների աղոթքները բնութագրված՝
1) Նրա պատվիրանները պահելով (հհ. 22,24)
2) ճիշտ ապրելով
3) Հիսուսին հավատալով
4) միմյանց սիրելով
5) Նրա մեջ մնալով և Նա էլ մեր մեջ
6) Հոգու պարգևը ունենալով

բ. 1 Հովհաննես 5:14-16 – հավատացյալների աղոթքը բնութագրված՝
1) Աստծո վրա վստահությամբ
2) Նրա կամքի համաձայն
3) հավատացյալները իրար համար աղոթելով

Գ. Հակոբոս՝

1. Հակոբոս 1:5-7 – հավատացյալները տարբեր փորձություններ դիմակայելիս կանչված են իմաստություն խնդրելու՝ առանց վարանելու
2. Հակոբոս 4:2-3 – հավատացյալները պետք է խնդրեն ճիշտ շարժառիթներով
3. Հակոբոս 5:13-18 – հավատացյալները, որոնք դիմակայում են առողջական խնդիրներ, հորդորվում է՝

ա. խնդրել երեցներին, որ աղոթեն

բ. հավատքով աղոթել

գ. խնդրել, որ իրենց մեղքերը ներվեն

դ. իրենց մեղքերը միմյանց խոստովանել և աղոթել իրար համար (նման է 1 Հովհ. 5:16)։

Ազդեցիկ աղոթքի գաղտնիքը Քրիստոսակերպությունն է: Ահա թե ինչ է նշանակում աղոթել Հիսուսի անունով: Ամենավատ բանը, որ Աստված կարող է անել Քրիստոնյաներից շատերի համար, նրանց եսասիրական աղոթքներին պատասխանելն է: Ինչ-որ իմաստով բոլոր աղոթքներն էլ պատասխանվում են: Աղոթքի ամենաարժեքավոր կողմն այն է, որ հավատացյալը Աստծո հետ, Աստծուն վստահելու ժամանակ է անցկացրել:

❖

NASB, NRSV **«տրտունջ»**
NKJV **«խորհրդածություն»**
LXX **«աղերսանք»**

ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 967) հաճախ է կիրառվում պոեզիայի մեջ «բողոքի, տրտունջի» համար:

1. Հոբ 7:11, 9:27, 10:1, 21:4, 23:2
2. Սաղմոս 55:2, 142:2
3. Առակաց 23:29

Սաղմոսերգուն դիմում է Աստծուն կյանքի անարդարության՝ ուխտի մեջ գտնվող մարդիկ միմյանց վրա հարձակվելու հարցով:

❖ **«պահպանի՛ր կյանքս թշնամու ահից»** ԲԱՅԸ (BDB 665 I, KB 718, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է Սաղմ. 12:7, 32:7, 140:1,4-ում «-ից» ՎԵՐՋԱԾԱՆՑՈՎ: Այն կիրառվում է Աստծո համար՝ պահելու, հսկելու, պահպանելու իմաստով 2 Օր. 32:10, Սաղմ. 25:20, 31:23, 40:11, Ես. 26:3, 42:6, 49:8-ում: Աստծո ժողովուրդը կարող է վստահել, որ Նա է նրանց պաշտպանը: Սա չի նշանակում է, որ կյանքը առանց խնդիրների կլինի, այլ Աստծո և Նրա գթառատ ողորմածությանը հաստատ ներկայությունը կլինի բոլոր նրանց հանդեպ, ովքեր փնտրում են Նրան:

❖ **«թշնամին»** Բառը ԵՋԱԿԻ է, սակայն կիրառված է հավաքական իմաստով (տես՝ Սաղմ. 64:2-6):

64:2 «Թաքնվել» (BDB 711, KB 771, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) ԲԱՅԸ զուգահեռ է «պահպանել» բառին Սաղմ. 64:1-ում: Սաղմոսերգուն սպառնալիք է զգում ուխտի մեջ գտնվող մյուս մարդկանցից, որոնք ծածուկ ծրագրում են իրենց դավադրությունը:

Նկատեք, որ սաղմոսերգուն խնդրում է ՅԱՀՎԵԻՆ ծածկելու իրեն, իսկ ամբարիշտները ծածկում են իրենց բնաջնջելու համար իրենց ծածուկ հնարքները (տես՝ Սաղմ. 64:5):

❖

NASB	**«խռովություն»**
NKJV	**«ապստամբություն»**
NRSV	**«դավադրություն»**
TEV, REB	**«ամբոխներ»**
NJB	**«ավազակախմբեր»**
JPSOA	**«ամբոխ»**

Այս արմատը ՀԿ-ում հանդիպում է միայն երեք անգամ: Այն NIV տարբերակը թարգմանում է որպես՝

1. Սաղմ. 2:1 – «դավադրություն»
2. Սաղմ. 55:14 – «խումբ»
3. Սաղմ. 64:2 – «աղմկոտ ամբոխ»

64:4 «անմեղ» Այս տերմինը (BDB 1070) մատնացույց է անում բարոյական անարատություն, ոչ թե անմեղ մարդ (այսինքն՝ չգիտակցված, ոչ դիտավորյալ մեղք): Սա կիրառվում էր Հոբի համար (տես՝ Հոբ 1:1,8, 2:3, 8:20, 9:20-22, Սաղմ. 37:37):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՀԱՆՑԱՆՔ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ</u>

64:5

NASB	**«չար նպատակով իրար ամուր բռնում են»**
NKJV	**«չար նպատակով իրար քաջալերում են»**
NRSV	**«նրանք ամուր են բռնում իրենց չար նպատակից»**
TEV	**«նրանք իրար քաջալերում են իրենց չար գործերում»**
NJB	**«նրանք իրար օգնում են իրենց չար ծրագրերում»**
JPSOA	**«նրանք իրար հետ են իրենց չարախոսությամբ»**
REB	**«նրանք հաստատում են իրենց ամբարիշտ որոշումները»**

NIDOTTE, հատոր 2, էջ՝ 72, թվարկում է մի քանի հավանական իմաստներ՝ նշանակությունները ԲԱՅԻ *Piel* ձևի համար (BDB 304, KB 302):

1. ամուր են բռնում
2. նրանք զորանում են իրենցով (այսինքն՝ փոխադարձ աջակցությունը)
3. նրանք հաստատվում են իրենցով (այսինքն՝ հաստատում են իրենց չար մտադրությունները)

❖ **«Ո՞վ է տեսնելու»** Այս արտահայտությունը վերաբերում է՝

1. սաղմոսերգուին որոգայթի մեջ գցելու նրանց ծածուկ ծրագրերին

2. անհավատությանը, որ Աստված գիտի և կգործի սաղմոսերգուի համար (տես՝ Հոբ 22:13, Սաղմ. 10:11, 59:7, Եսայի 29:15, Եզեկ. 8:12):

64:6 Սաղմոս 64:6-ում կա երեք բառ, որ կիսում են եբրայերեն տառերը՝ חפה (BDB 344):
1. որոնել (NASB, «հնարել»)
2. լավ մտածված
3. դավադրություն

❖ **«մարդու ներքին խոհերը և սիրտը խորունկ են»** Այս համատեքստում սա նկատի ունի սաղմոսերգուի թշնամիների չար շարժառիթները: BDB սահմանում է «խորունկը» (BDB 771) որպես «անքննելի» (տես՝ Հոբ 12:22, Ժող. 7:24 /երկու անգամ/) կամ առեղծվածային: NJB և Խարիսխ Աստ-վածաշունչը այն թարգմանում են որպես նրանց գործողությունների մասին ՅԱՀՎԵԻ իմանալու նշանակությամբ: Սակայն, կարծես թե Սաղմ. 64:1-6 թշնամիների գործողությունների մասին է, իսկ Սաղմ. 64:7-9՝ ՅԱՀՎԵԻ պատասխանի:

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 282-284) ցույց է տալիս մի շարք տեքստային խնդիրներ և հնարավորություններ այս երկու համարների շուրջ: Դրանցից մեծ մասը ունեն "C" գնահատական (բավականին կասկածելի):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 64:7-10
7Բայց Աստված նրանց խոցելու է նետով.
Նրանք հանկարծ են վիրավորվելու:
8Իրենց լեզուների պատճառով իրենք են գայթելու.
Բոլոր նրանց տեսնողները հեռու են փախչելու:
9Եվ բոլոր մարդիկ վախենալու են,
Աստծո գործն են հռչակելու,
Քանի որ իմաստությամբ հաշվի են նստելու
Նրա արածի հետ:
10Արդարը Տիրոջով է ուրախանալու
Եվ իր վստահությունը Նրա վրա է լինելու,
Եվ բոլոր շիտակ սիրտ ունեցողները պարծենալու են:

64:7 Սա դերի հակադարձ տիպիկ նկարագրություն է: Ինչ որ ամբարիշտները արեցին արդարին (տես՝ Սաղմ. 64:3-4) այժմ իրենց է արվում:

Այսպիսի մի նկարագրություն կարող է բացատրել Սաղմ. 64:8-ը: Չարամիտները, որոնք օգտագործում էին ատելությամբ լի խոսքեր սաղմոսերգուի դեմ, այժմ ունեն իրենց սեփական խոսքերը կիրառված հենց իրենց դեմ:

64:8 «հեռու են փախչելու» Սա դարձվածք է անակնկալի և մերժվածության (տես՝ Սաղմ. 22:7, 44:14, Երեմ. 18:16, 48:27, Ողբ 2:15):

64:9 Նկատեք, որ այս աշխարհում ՅԱՀՎԵԻ գործողությունների վերջնական նպատակն է (այսինքն՝ օրհնությունը կամ դատաստանը, տես՝ Սաղմ. 58:11, 65:8) բոլոր մարդկանց համար, որ ճանաչեն Նրան:

Սաղմոս 64:9 անշուշտ չափազանցություն է և արտացոլում է այն, թե ինչ է պատահելու նրանց, ովքեր Իսրայելում են, սակայն ինչպես և շատ այլ համարներ, այն սահմանում է շատ ավելի ընդարձակ ճշմարտություն (տես՝ Սաղմ. 46:10):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>

64:10 Այս համարը յուրօրինակ ամփոփիչ խոսք է: Սովորաբար ամփոփիչ խոսքը Սաղմոսում՝

1. Աստծուն փառաբանություն է
2. գոհության զոհ է

❖ **«արդարը»** Տես <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

❖ **«ուրախանալու է»** Հնարավոր է այստեղ առկա է բառախաղ՝
1. լսելու, Սաղմ. 64:1 - שמע (BDB 1033)
2. ուրախանալու միջև, Սաղմ. 64:10 - שמח (BDB 970)

Սա *inclusio* ձևաչափում է:

❖ **«ապաստան»** Տես՝ Սաղմոս 2:12 և 5:11-12:

❖ **«պարծենալու են»** NRSV այս ԲԱՅԵՐԸ՝ «ուրախանալու են» (BDB 970, KB 1333) և «պարծենալու են» (BDB 237, KB 248) դիտարկում է որպես ԱՆԿԱՏԱՐՆԵՐ՝ կիրառված ՀԱՅ-ՑԱԿԱՆ իմաստով: Անգլերեն շատ թարգմանություններ ներկայացնում են այս ԲԱՅԵՐԸ որպես շարունակվող վիճակներ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ են այդքան շատ անհատական ողբեր ներառված Սաղմոսների գրքում:
2. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք Սաղմ. 64:6-ի վերջին տողը:
3. Բացատրե՛ք «հակադարձման» գրական հասկացությունը, որը այդքան առանձնահատուկ է ՀԿ-ին:
4. Արդյո՞ք Սաղմ. 64:9 նկատի ունի Իսրայելը, թե՝ ամբողջ աշխարհը: